Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
սեպտեմբերի 13-ի նիստի N 36
արձանագրային որոշման

# 2013–2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Կատարողը | Համակատարողը | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ուսումնասիրել և վերանայել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանը և խնամքի համայնքային ծառայությունների տրամադրմանն առնչվող իրավական ակտերը՝ դրանք համապատասխանեցնելով <<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին>> ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ առողջապա հության նախա րարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2013-2015թթ | Հոգեկան առողջության ոլորտի օրենսդրական դաշտը համապատասխա նեցված է<<Հաշմանդամութ յուն ունեցող անձանց իրավունքների մասին>> ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2. | Մշակել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման մեթոդաբանություն՝ ըստ նրանց ախտորոշումների, ախտաբանական վիճակների և հիվանդության ծանրության աստիճանի՝ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2013-2014թթ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով հաստատված մեթոդաբանության առկայություն | Դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նախատեսելով նաև տեղեկատվության էլեկտրոնային եղանակով պահպանման և վարման մեխանիզմներ | | | | | |
| 3. | Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման մեթոդաբանության հիման վրա իրականացնել Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում խնամվողների անհատական կարիքների գնահատում` համապատասխան ծառայություններ տրամադրելու համար | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տեղական և միջազգային հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2013-2014թթ | Տուն-ինտերնատի խնամվողների գնահատված կարիքները | Դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) |
| 4. | Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրման մեթոդաբանության հիման վրա մշակել այլընտրանքային ծառայությունների տրամադրման չափորոշիչներ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հասարակական և միջազգային կազմա կերպություններ (համաձայնությամբ) | 2014թ. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով հաստատված չափորոշիչների առկայություն | Դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) |
| 5. | Մշակել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համայնքային ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիր | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ առողջապահութ յան նախարարություն, համայնքեր (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություն-ներ (համաձայնությամբ) | 2014թ. | Փորձնական ծրագրի առկայություն | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 6. | Փորձնական ծրագրի իրականացման շրջանակում հանրապետության երկու համայնքում հոգեկան առողջության | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Մարզպետարաններ, համայնքներ (համաձայնությամբ), հասարակական | 2014-2015թթ. | Երկու համայնքում առավելագույնը 30 անձի բնակության համար շուրջօրյա | ՀՀ պետական բյուջե, համայնքային բյուջե` |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծել շուրջօրյա խնամքի տուն, որպես այլընտրանք Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի | | կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | | խնամքի տների առկայություն | ֆինանսական միջոցների առկայության դեպքում, դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) յուրաքանչյուր կողմի ֆինանսա-վորման չափը կսահմանվի պայմանագրով ՀՀ պետական բյուջեից ծախսերի հատկացման հնարավորու թյան հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ: |
| 7. | Ստեղծել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար համայնքային ցերեկային կենտրոններ, կամ զարգացնել գործող ցերեկային կենտրոնների կարողությունները | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Երևանի քաղաքապետարան, համայնքներ (համաձայնությամբ) հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2015-2017թթ. | Երեք համայնքում առավելագույնը 30-50 այցելուի համար հոգեկան առողջության ցերեկային կենտրոնների առկայություն | Համայքնային բյուջե՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում, դոնոր կազմակեր-պություններ (համաձայնությամբ) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ՀՀ պետական բյուջեի միջոցներից կենտրոնների համաֆինանսա-վորում աշխատա-վարձի փոխհա տուցման ձևով: ՀՀ պետական բյուջեից ծախսերի հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ: |
| 8. | Ստեղծել ցերեկային կենտրոններ մտավոր և հոգեկան զարգացման խնդիրներ ունեցող երեխաների և դեռահասների համար | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ առողջապա հության նախարարություն, մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, (համաձայնությամբ), համայնքներ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2014-2017թթ. | Առնվազն 2 համայքում ցերեկային կենտրոնի առկայություն՝ 30- 50 անձի համար | ՀՀ պետական բյուջե, համայնքային բյուջե՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում, դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) ՀՀ պետական բյուջեից ծախսերի հատկացման հնարավորու թյան հարցը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ: |
| 9. | Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար կազմակերպել սատարող բնակարաններ և տներ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), համայնքներ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2014-2017թթ. | 10 սատարող բնակարան կամ տուն` 3-10 անձի բնակության և ինքնուրույն կյանքին հարմարվելու համար | ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) ՀՀ պետական բյուջեից ծախսերի հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ: |
| 10. | Ստեղծել խնամքի շուրջօրյա և ցերեկային կենտրոններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների համար, աջակցել մասնավոր հատվածում կամ Հ/Կ-ների կողմից ստեղծված նման կենտրոնների կարողությունների զարգացմանը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), համայնքներ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2015-2016թթ. | Մեկ շուրջօրյա /10-20/ և մեկ ցերեկային կենտրոնի /20-30/ առկայություն | Համայնքային բյուջե` ֆինանսական միջոցների առկայության դեպքում, դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11. | Ուսումնասիրել և գնահատել հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի շուրջօրյա և ցերեկային կենտրոնների գործունեությունը և գնահատման արդյունքում ներկայացնել առաջարկություններ նրանց պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), համայնքներ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2014-2017թթ | Հասարակական կազմակերպություններ ի իրականացրած ծրագրերիգնահատման արդյունքում ներկայացված են համապատասխան առաջարկություններ | ՀՀ պետական բյուջե համայնքային բյուջե՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում, ՀՀ պետական բյուջեից ծախսերի հատկացման հնարավորության հարցը քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ: |
| 12. | Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքները գնահատելու նպատակով համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների սոցիալական աշխատողների /դեպք վարողների/ համար կազմակերպել սեմինարներ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հասարակական կազմակերպություն-ներ (համաձայնությամբ) | 2014-2017թթ. | Տրամադրված արդյունավետ ծառայություններ | Դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) |
| 13 | Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների սոցիալական աշխատողների /դեպք վարողների/ կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), մարզպետարաններ, համայնքներ (համաձայնությամբ), հասարական | 2014-2017թթ. | Համագործակցութ յուն ծառայություններ տրամադրող կառույցների միջև և տրամադրված արդյունավետ ծառայություններ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | քարտեզագրման և նրանց համապատասխան կազմակերպություններ ուղղորդելու նպատակով ընդլայնել համագործակցությունը նշված կենտրոնների և ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջև | | կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | | | |
| 14. | Աջակցել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ իրենց ձեռքի աշխատանքներից հասցեական նվիրատվություններ կատարելու միջոցով բարեգործական ակցիաներ կազմակերպելու գործում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), մարզպետարաններ, համայնքներ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություն-ներ (համաձայնությամբ) | 2014-2017թթ. | Կազմակերպված բարեգործական ակցիաների շնորհիվ բարձրացել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինքնագնահատականը և ինքնաիրացման հնարավորությունը | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 15. | Համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակում աջակցել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ընտանիքների անդամներին՝ ստանալու անվճար սոցիալ-հոգեբանական, իրավաբանական և խորհրդատվական օգնություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2014-2017թթ. | Ցուցաբերված է սոցիալական աջակցություն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ընտանիքներին | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 16. | Հոգեկան առողջության խնդիրների լուծման ոլորտում համագործակցության ապահովում բոլոր մակարդակներում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), մարզպետարաններ, համայնքներ (համաձայնությամբ), հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2014-2017թթ | Իրականացված համատեղ քննարկումներ, սեմինարներ, փոխանակված տեղեկատվություն՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համայնքային ծառայությունների ներդրման գործընթացում | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 17. | Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ հոգեկան առողջության ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մասնագետների համար | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարա րություն | ՀՀ առողջապահութ յան նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, հասարակական կազմակերպություն ներ, (համաձայնությամբ) | 2014-2017թթ. | Հոգեկան առողջության ոլորտի մասնագետների որակավորման բարձրացում՝ վերապատրաստ ման միջոցով | Դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) |
| 18. | Բարձրացնել բնակչության իրազեկվածությունը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ առողջապա հության նախարարություն, ԶԼՄ-ներ, հասարակական կազմակերպություն ներ (համաձայնությամբ) | 2013-2017թթ. | Հասարակության իրազեկվածության բարձրացում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հիմնախնդիրների և իրավունքների վերաբերյալ, տեղեկատվական թերթիկների, բուկլետների տպագրություն | ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 19. | Կազմակերպել հոգեկան առողջության խնդիրների վերաբերյալ գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), մարզպետարաններ, համայնքներ (համաձայնությամբ), տեղական և միջազգային հասարակական կազմակերպություն ներ / համաձայնությամբ/ | 2013-2017թթ. | Ոլորտի միջազգային փորձի փոխանակում և ուսումնասիրություն, վերապատրաստված մասնագետների առկայություն | Դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) |
| 20. | Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման համակարգի ստեղծման շրջանակներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման ծրագրի մոնիթորինգի, վերլուծության և գնահատման համակարգի ստեղծում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ առողջապահության նախարարություն | 2014-2015թթ | Մոնիթորիգի, վերլուծության և գնահատման համակարգի առկայություն | Դոնոր կազմակերպու-թյուններ (համաձայնությամբ) |